ՆՈՐ-ԴԱՐ

№ 132 ՏԱՍՆԵԻՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի, 21 Օգոստոսի **1901** Երեքշաբթի, 21 Օգոստոսի ՏԱՍՆԵԻՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 132

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.։ Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis, Rédaction ,,Nor-Dar''

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ,

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հոգևորական տեսուչ։

Քրոնիկոն.—Լուրեր։

Մեզ գրում են. — Ախալցխայից: Հաղբատից:

Մխիթար սպայ և իր գործը։

Թղթակցութիւններ.— Շուշուց։ Նամակ Պարսկաստանից Մարաղա։

Քաղաքական. - Ֆրանսիա։ Անգլիա։

Հեռագրական լուրեր։

Բանասիրական.— Մատենախօսութիւն։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ՏԵՍՈՒՉ

Բարձրագոյն հոգևոր կառավարութեան կարգադրութեամբ, Կովկասի հոգևոր դպրանոցներն այսուհետև պէտք է կառավարուեն հոգևորականների ձեռքով: Ուրիշ խօսքերով ասած՝ Թեմական դպրանոցների հոգաբարձութիւնները պարտական են տեսուչ ընտրել հոգևորականներից։ Մեզ այդ կարգադրութիւնն ամենևին չի զարմացնում, քանի որ խօսքը հոգևոր Թեմական դպրանոցների մասին է, որովհետև ով, եթէ ոչ հոգևորական անձը, կարող է ճիշտ ըմբռնել հոգևոր դպրանոցների կարիքը, նպատակը և ուղղութիւնը։ Եթէ այդ դպրանոցները հոգևոր չլինէին, մենք անշուշտ մեր զարմանքը կըյայտնէինք այդ տեսակ կարգադրութեան մասին, որովհետև թէ պատմութիւնը և թէ իրականութիւնը ցոյց են տալիս, որ եթէ աշխարհական դպրոցները հոգևորականների ձեռքում լինեն, կարող է ամբողջ ուսումը կղերական գոյն և ուղղութիւն ստանալ, որ ի հարկէ ցանկալի չէ: Ցանկալի չէ այն պատճառով, որ արդի գիտութիւնը և կղերականութիւնը միմեանց ոչնչացնող տարրեր են (օրինակ կաթոլիկութիւնը և գիտութիւնը), ուստի կղերականութիւնը կարող է դպրոցներում ոչնչացնել կամ թուլացնել գիտութիւնը։ Գուցէ մեր մէջ այդ ներքին, միմեանց ոչնչացնող, ոյժերը զօրեղ չեն, բայց էլի գոյութիւն ունեն և պիտի ունենան։

Սակայն երբ խօսքը հոգևոր դպրոցների մասին է, մենք պէտք է նախ և առաջ ի նկատի ունենանք եկեղեցու շահերը, և որովհետև այդ շահերը պահանջում են, որ քահանաները, տիրացուները, վարդապետները և եպիսկոպոսները ստացած լինեն այնպէս ասած հոգևոր կրթութիւն, որպէս զի նրանք հմուտ լինեն եկեղեցական առարկաների մէջ և ընտելացած լինեն եկեղեցական կարգ ու կանոնի,—հասկանալի է, որ այդպիսի ուղղութիւն պարտական է ունենալ և հոգևոր դպրանոցը։ Մենք չենք առաջարկում դառնալ միջնադարեան կղերական սիստեմին կամ խաւարամիտ սոտիապաշտութեան. ոչ. մենք ասում ենք, որ հոգևորականը պէտք է հոգևորական լինի և ոչ թէ աշխարհական, ինչպէս որ են և աշխատում են լինել մեր քահանաներից և վարդապետներից շատերը։ Կամ չպէտք է ընդունենք առհասարակ հոգևորական դասի անհրաժեշտութիւնը և կամ եթէ ընդունում ենք, պէտք է ընդունենք նաև, որ այդ հոգևորականներն ունեն որոշ պարտականութիւններ, որոնք զատում են նրանց մեզնից աշխարհականներիցս։ Թեմական դպրանոցների հոգևոր տեսուչները կոչուած են դաստիարակել իրենց սաներին այնպիսի ոգով և ուղղութեամբ, որ նրանք հոգևորական դառնալուց յետոյ ճշտիւ կատարեն իրենց պարտականութիւնները։ Եւ այդ գործը չի կարող անել աշխարհականը, քանի որ նա կամ հակառակ է դրան և կամ չի կարող այդ պէտքը, կարիքը լաւ ըմբռնել։ Մեր դպրանոցների նախկին աշխարհական տեսուչների մէջ միմիայն երկուսը կամ երեքը հասկացել են, թէ ինչ են իրենց գլխաւոր պարտականութիւններն իբրև հոգևոր Թեմական դպրանոցի տեսուչների։ Եթէ մինչև այժմ վերոյիշեալ կարգադրութիւնը չի եղել, դրա պատճառը տեսչացու-հոգևորականների բացակայութիւնն էր մեր մէջ. իսկ այժմ, ինչպէս յայտնի է, մեր վարդապետների ու քահանաների մէջ բաւական թիւ լսարանաւարտներ կան, քիչ չեն նաև համալսարանաւարտները։ Դրանց ստացած բարձրագոյն ուսումը կարող է ամենահեշտ և ամենալայն կերպով գործադրուել հէնց դպրանոցներում և նախ և առաջ տեսչի պաշտօնում։ Տեսուչն է ամեն բանի գոյն և եղանակ տուողը, նա է դպրանոցի գլուխը, ներկայացուցիչը և պատասխանատուն։ Այս հասկանում էին թէ ս. էջմիածինը, թէ հոգաբարձութիւնները, թէ հասարակութիւնը, թէ տեսուչները և թէ աշակերտները։ Եւ չնայած դրան, տեսուչ էին ընտրում և հաստատում այնպիսի անձեր, որոնք ոչ միայն ծաղրում էին եկեղեցին, այլ և իրենց ուղղութեամբ ոչ մի առնչութիւն չունէին եկեղեցու դաւանած հաւատի հետ։ Այդ պարոններն իրաւունք ունին դաւանելու ինչ որ ուզում են. դա իրենց գործն է. բայց մենք չենք ուզում, որ մեր ապագայ հոգևորականները ծուռ ու մուռ տեղեկութիւններ ունենային մեր եկեղեցու և հաւատի մասին։ Հոգևոր տեսուչը կարող է գրաւական լինել, որ դպրանոցներից դուրս կըգան հայ հոգևորականներ և ոչ թէ միջնագայլին տիրացուներ, որոնք отъ одного берега отстали, а къ другому не пристали...

Որ հոգևոր Թեմական դպրոցների տեսուչները հոգևորական անձեր են լինելու, դա մեզ, կրկնում ենք, չի զարմացնում։ Մեզ զարմացնում է միմիայն այն, թէ ինչու, եթէ այդ օրէնքը որոշ սկզբունքի հետևանք է,—ընդհանուր և անպայման չէ։ Բոլոր Կովկասի դպրանոցները պէտք է հոգևորական-տեսուչներ ունենան, իսկ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի դպրանոցը։ Մտածել են արդեօք նրա մասին, և եթէ մտածել են, ինչու, ինչ պատճառով այդ ս. էջմիածնի «աչքից և սրտից հեռու» անխնամ դպրանոցը պէտք է բացառութիւն կազմէ։ Նոր Նախիջևանի դպրանոցն այժմեան ռէժիմի շնորհիւ ուղղակի այլասեռւում է, նա այլ ևս հոգևոր դպրանոց չէ, այլ «պրիկաշչիկանոց»․ Նրան անհրաժեշտ է հոգևորական տեսուչ. դա գոյութեան և մահուան հարց է։

Օրէնքը պէտք է ընդհանուր և անպայման լինի, և Նախիջևանի Թեմական դպրանոցը չպէտք է բացառութիւն կազմէ *)։ Համալսարանաւարտ վարդապետներ մենք ունինք. օրէնքն սկսուել է գործադրուել, և մենք սպասում ենք, որ նա գործադրուի և Նախիջևանում:

X.

*) Ինչու էք կարծում, թէ այդ դպրանոցը բացառութիւն է կազմում։ Ի հարկէ, Նոր Նախիջևանի հոգևոր դպրանոցի տեսուչն էլ պէտք է հոգևորական լինի։ Խմբ.

ՔՐՈՆԻԿՈՆ

Նորին արքայական մեծութիւն հելլէնների Թագուհի Մեծ Իշխանուհի Օլգա Կոնստանտինովնան Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Գէորգի Միխայլովիչի հետ օգոստոսի 25-ին ժամանելու է Բաթում, որտեղից նոյն օրը կըմեկնի Բորժոմ։

— Կովկասեան կառավարչապետ գեն.-ադ. իշխ. Գ. Ս. Գալիցինը, Պետերբուրգից վերադառնալով, Թիֆլիս է ժամանելու հինգշաբթի, օգոստոսի 23 ին։

— Կովկասի կառավարչապետի ղիւանատունն այսօր, օգոստոսի 21.-ին, Կոջօր ամարանոցից վերադառնում է Թիֆլիս։

— Կովկասի կառավարչապետ գեն.-ադ. իշխ. Գ. Ս. Գալիցինը միաձայն ընտրուած է արևելագիտական ընկերութեան պատուաւոր անդամ։

— Կովկասի կառավարչապետի օգնական գեն.-լէյտ. Ա. Ա. Ֆրեզէն վաղը, օգոստոսի 22-ին, Կոջօր ամարանոցից վերադառնում է Թիֆլիս։

— Ճիշտ չէ լրագրների հաղորդած այն լուրը, թէ Լազարեան ճեմարանում մտադրութիւն կայ գիմնազիօնական դասարանների մէջ պահպանել հին լեզուների դասաւանդումն իւր նախկին ծաւալով։ Ինչպէս հաղորդում է «Ռուս. Վեդ.» հաւաստի աղբիւրից, առաջիկայ դպրոցական տարում Լազարեան ճեմարանում ուսումը կաւանդուի մինիստրական նոր ծրագրով։ Ցետագայում ճեմարանը կըմշակի իւր պայմաններին համապատասխան ուսման ծրագիր:

— Որոշուած է կովկասեան ցուցահանդէսի գլխաւոր շէնքի մէջ մի առանձին պաւիլիօն շինել ցուցահանդէսի օգոստափառ հովանաւոր Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչի ընդունելութեան համար։

— Կովկասեան ցուցահանդէսի կազմակերպութեան համար պետական գանձարանից յատկացրուած է 5,600 ր.:

— Բագուից Թիֆլիս եկող մարդատար գնացքը կիրակի, օգոստոսի 19-ին, առաւօտեան ժամը 5½-ին, խորտակուեց Ղարայեազ կայարանում: Շոգեմեքենան դուրս ընկաւ երկաթագծերից, հետևեալ իբեղէնների վագոնը ջարդուփշուր եղաւ, յետոյ երկաթագծերից դուրս ընկան եր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ*)

Historische Grammatik der Kilikisch-Armenischen von Dr. Josef Karst, Strassbur Verlag von Karl J. Trübner, 1901.

(Դօքտոր Ի. Կարստ, «Պատմական քերականութիւն կիլիկեան հայերէնի»․ Ստրասբուրգ, 1901)

Այժմ գանք բուն քերականութեանը:

Եթէ «քերականութիւն» ասելով հասկանում ենք մի լեզուի ձայնաբանութիւնը, ստուգաբանութիւնն և համաձայնութիւնը միասին առած, ապա ուրեմն դր. Կարստի աշխատութիւնը կիլիկեան հայերէնի ամբողջական քերականութիւնը չէ, այլ միայն նրա «ձայնաբանութիւնն» և «ստուգաբանութիւնը», որոնք բռնում են գրքի 390 էջը. իսկ իբրև միայն «յաւելուած»ի (Anhang) մէջ (էջ 391 - 407) պարզուած են կիլիկեան հայերէնի համաձայնութեան առանձնայատկութիւնները։ Էջ 408—415 յաւելումներ են քերականութեան վրայ, էջ 416—444 էքսկուրս (բառական օրինակներ Վարդանի առակներից)։ Ամբողջ գիրքն ուրեմն պարունակում է XXIII+444 էջ։

Նախ տեսնենք կիլիկեան հայերէնի ձայնաբանական առանձնայատկութիւնները։

Տասներորդ դարից առաջ արդէն աւ ը բաղաձայններից առաջ օ-ի հնչիւն է ստանում, որն և տեսնում ենք նաև կիլիկեան հայերէնում. օրինակ, հաւր (հօր), հզաւր (հզօր)։ Հին աւ-ից առաջացած այս օ հնչիւնն աւելի որոշ նշանագրելու նպատակով 12-րդ դարում հայերէն այբուբէնը հարստանում է մի նոր տառով — օ, յունարէնից (օ — օմիկրօն) փոխ առած, որն և օտար բառերում էլ համապատասխանում է օ հնչիւնին. օր. սօլ, (հին ֆր. sol), նօտար։ Մի քանի ձեռագիրների մէջ ձայնաւորներից առաջ էլ աւ-ի փոխանակ տեսնում ենք օ, որ նոր օրէնքի սխալ հասկացողութեան հետևանք է, ի հարկէ. օրինակ, մերձօր, փոխանակ մերձաւոր, օուրն, փոխանակ աւուրն, իրօացի, փոխանակ իրաւացի. ինչպէս օրինակ նաև բառի վերջում—բերօ, փոխ. բերաւ:

Աւ-ը իր նախկին հնչիւնը պահում է կիլիկեան հայերում նաև բաղաձայններից առաջ այն դէպքում, երբ նրա և յաջորդ բաղաձայնի մէջ առաջ գոյութիւն ունեցող մի ձայնաւոր է դուրս ընկել, օրին. հաւսար (գր. հաւասար), հաւտամ (գր. հաւատամ)։

Գրաբարի եւ շաղկապի փոխարէն կիլիկեան հայերէնում գործածական է ու և նաև բարդութիւնների մէջ. օր. կիլ. ինչու, գրւում է մինչեւ, կիլ. ինչուր, գրւում է մինչեւ ի։ Այս փոփոխութիւնը նկատելի է, արդէն նոյն իսկ դասական լեզուի մէջ, ինչպէս օրին. իբրեւ-ի հետ նաև իբրու, ութուտասն և ութեւտասան, այրուձի և այրեւձի։ Արդի հայերէնում եւ, ու շաղկապը խառն գործածական է։

Դասական լեզուի կ, տ, պ գրերը (Tenuer) կիլիկեան հայերէնում ստանում են համապատասխան գ. դ. բ գրերի (Mediae) հնչիւն։ Եւ ընդհակառակը, դասական լեզուի գ, դ, բ գրերը՝ կ, տ, պ գրերի հնչիւն։ Ձայնաբանական այս փոփոխութիւնն աւելի պարզ նկատելի է օտար բառերի մէջ. օրինակ, պազար = նոր պարսկ. bazar, պարօն = հին ֆր. baron, խապար = արաբ. xabar, սապուն = արաբ. sabun: Տիւան = նոր պարսկերէն divan, տուպլ = հին ֆրանսերէն double, ափթար = արաբ. և պարսկ. daftar, տուկ = հին ֆրան. duc: Եւ ընդհակառակը՝ աւրբել = հին ֆր. otrier, բլայթ = հին ֆր. plait, մարգիզ = հին ֆր. marchis, գոյներ = հին ֆր. couilner, գունդ = հին ֆր. compte։ Նաև՝ բրինձ = հին ֆր. prince, բասաճ = հին ֆրանսերէն passage.

Կիլիկեան հայերէնում ծագած ձայնաբանական այս նոր օրէնքը գոյութիւն ունի այժմ էլ թիւրքահայ բարբառներում, այն ինչ արևելահայ բարբառները պահպանել են դասական օրէնքը։ Դասական լեզուի մէջ արդէն, ռնգային Ն-ից յետոյ, երբեմն նաև մ-ից յետոյ հանդիպում են կրկնակի գրութեան ձևեր. օրինակ՝ անկանիմ և անգանիմ, անկին և անգին, ընկեր և ընգեր, ընկոյզ և ընգոյզ, ընկենում և ընգենում, ընտանի և ընդանի, ըմպեմ և ըմբեմ։

Անցնենք այժմ կիլիկեան հայերէնի ստուգաբանութեանը։ Կիլիկեան հայերէնի հոլովումն իւր շատ առանձնայատկութիւններն ունի, որոնցով նա էապէս տարբերւում է գրաբարի հոլովումից և իբրև հիմք ծառայում է արդի հայերէնի հոլովումի։

Բաղաձայն արմատ ունեցող այն անունները, որոնք գրաբարում Ն են վերջանում, կիլիկեան հայերէնում արդէն կորցրել են այդ տառը. օր. ձուկ (գր. ձուկն), անձ, գառ, դուռ, և այլն։ Սոյն երևոյթը շարունակւում է նաև արդի հայերէնում։

Այս կարգի գոյական անունները եզակի գործիականում գրաբարի ամբ-ի փոխանակ ստանում են օվ մասնիկը, որը բոլորովին նոր է, գրաբարի անծանօթ, և միմիայն կիլիկեան հայերէնին յատուկ. օր. ձկ-օվ (եզ. ուղղ. ձուկ), եղէգ-օվ (եղէգ), անձ-օվ (անձ): Հայ լեզուի ձայնաբանական օրէնքների հիման վրայ՝ գործիականի այս միանգամայն նոր վերջաւորութիւնը (օվ) գրաբարի համապատասխան ամբ մասնիկից առաջ եկած չէ կարող համարուել։ Հաւանօրէն երկու մասնիկներն էլ, թէ գրաբարի ամբ-ը և թէ կիլիկեան հայերէնի օվ-ը, իբրև իրարից անկախ ձևեր, իրենց ծագումն առնում են նախնական հայերէնի մի ընդհանուր -ան+վ ձևից, որից ան-ը բառի արմատին է պատկանում (ձկ-ան), իսկ վ գործիականի հոլովիչ նշանն է, նաև ձայնաւոր արմատների համար (օր. գործո-վ)։ Յիշեալ անվ ձևը գրաբարում սկզբնապէս դարձել է ամվ, որից ապա գործիականի ամբ վերջաւորութիւնն է առաջ եկել։ Նոյն անվ ձևը ուրիշ զարգացում է ունեցել, կիլիկեան հայերէնում դարձել է նախ ամ-վ, ապա ամ-մ, որից ծագել է ավմ, աւմ կամ օմ կիլիկեան ձևը, ինչպէս որ պաշտօն —պաշտաւն բառը ծագել է նախնական պաշտամն բառից, որի սեռականն է պաշտաման։

Ամենայն դէպս գործիական այս նոր, օվ վերջաւորութիւնը կիլիկեան հայերէն լեզուի զարգացումի ամենակարևոր մոմէնտներից մէկն է, որի ծագումը բացատրելն իսկապէս խիստ դժուար է։ Դր. Կարստի տուած վերոյիշեալ բացատրութիւնը հաւանականութիւնից զուրկ չէ թւում մեզ։

Կիլիկեան հայերէնի հոլովումի մէջ աչքի են ընկնում նաև գոյական անունների առանձնայատուկ յոգնակի վերջաւորութիւնները.

1) - եր. օր. աչ-եր, ազգ-եր, գետ-եր, գաս-եր, բժշկ-եր, աղջկներ (ուղղակ. աղջկին) կարճ-եր և այլն։ Եր. յոգն. վերջաւորութեան առաջին հետքերը գտնում ենք մենք դեռ դասական մատենագրութեան մէջ, -եր-ի հին եար ձևով. օր.—բան-եար (Վարդան), վան-եար (Փաւստոս), վարժ-եար (Փաւստոս), որ եար (Ղ. Փարպ.), նաև վերջնիս բարդութիւնները՝ աւագ-որ-եար, հաց-որ-եար և այլն։ Ղազար Փարպեցու մէջ գտնում ենք նոյն իսկ միջնադարեան յոգ. եր վերջաւորութիւնը, օր. բան-եր, հայ-եր, հարկ-եր, ձեռն-եր։ Թէ իսկապէս յոգն. եար վերջաւորութիւնը մա-

*) Տես «Նոր-Դար» № 129

բորդ կարգի երկու վագոն։ Բաբերաղ-դաբար, ուղևորներից ոչ ոք չվնասուեց։

— Սրանից երկու շաբաթ առաջ նը կատեցինք, որ ցուցահանդէսը որոշուած օրը պատրաստ լինել կարող չէ։ Կովկասեան ցուցահանդէսի բացումը յետաձգուած է օգոստ. 20-ից առաջիկայ սեպտեմբերի 2-ը։ Արձակուրդից օգտուելով, գաւառներից ուսուցիչներ են եկել Թիֆլիս ցուցահանդէսը դիտելու։ Դրանք բոլորը ոչինչ չտեսած պէտք է վերադառնան իրենց պաշտօնատեղերը, որովհետև սեպտ. 1-ին սկսւում են դպրոցական պարապմունքները։ Անպատրաստ և կիսատ ցուցահանդէսը մեզ վրայ ճնշող, խեղդող տպաւորութիւն է անում, պաւիլիօն-շէնքերը միսեանց մօտ ընկած են և գլխաւոր տունը բռնում է փակուած տարածութեան ամբողջ լայնութիւնը. մենք չգիտենք, թէ բազմաթիւ հասարակութիւնը որտեղ և ինչպէս պիտի շարժի. առաջին ցուցահանդէսի հետ համեմատած, մենք գերադասում ենք առաջինը, ինչ ընդարձակութեան և ստացուած ընդհանուր տպաւորութեան է վերաբերում։

— Այս տարուայ վերջը Պետերբուրգում կը սկսի լոյս տեսնել մի ամսագիր յատկապէս կոյրերի համար։ Ամսագիրը տպուելու է Բրայլի սիստեմով։

— Բագուի նահանգում եղջիւրաւոր անասունների ժանտախտի դէմ կռուելու համար յատկացուած է 27 հազար ռուբ. լրացուցիչ գումար։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ.—Օգոստոսի 12-ին երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանուեց Ս. Էջմիածնի միաբան Պետրոս վարդ. Այվազեանը։ Հանգուցեալը հին վարդապետներից էր և զանազան տեղեր վարել է թէ յաջողութեան և թէ վանահայրութեան պաշտօններ. 1894—99 թուականներին խաղաղ կերպով վարում էր Ախալցխայի յաջողութեան պաշտօնը։ Վերջին տարիներս նշանակուել էր սի. նոդի անդամ, սակայն հիւանդութիւնը խանգարել էր նրան այդ պաշտօնը վարելու, և նա ստիպուած էր այս տարուայ սկզբից գալու իւր հայրենիք, որտեղ և կընքեց իւր մահկանացուն։

—

ՀԱԴՐՈՒԹԻՑ (Ջիբրայէլի գաւ.).— Այս տարի եղանակը մեր գաւառում չափից դուրս տաք է։ Այդ է պատճառը, որ տարուայ բերքը սովորականից շուտ հասաւ։

— Մեր գիւղի այլանդակ սովորութիւններից մէկ էլ պատերից ծածկագիր ստորագրութեամբ թղթեր կպցնելն է։ Մի քանի անյայտ տղայամիտներ իրրև թէ դրանով հարուածում են տեղիս վատ սովորութիւնները, բայց նրանք սխալւում են չարաչար։ Եթէ նրանց կըպցրած թերթերի բովանդակութիւնն ստոյգ է, հեռու ամեն տեսակ չարամտութիւնից, գուցէ կարելի լինէր հաշտ աչքով նայել նրանց արարմունքին. բայց բոլոր խաւարային գործերի նման, նրանց արածներն էլ աններելի են միանգամայն. ինչ լաւ բան կամ բարի խորհուրդ կարելի է սպասել կիսակիրթ անկոչ դաստիարակներից։

—Լսեցինք, որ ֆելդշեր պ.Վ. Թումանեան խնդրամատոյց է եղել իւր տեղափոխման մասին հաղրութից Գանձակ իւր ծննդավայր քաղաքը։ Մեզ մնում է միայն ափսոսալ, եթէ ստոյգ է այդ լուրը. ոչ միայն հաղրութը, այլ նոյն իսկ մեր գաւառի ամբողջ բնակչութիւնը կը զրկուի նրա նման մի բանիրուն անձնաւորութիւնից։

Օգոստոսի մէկից «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում և վճարում են 5 ր. 50 կ.։

ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՅ ԵՒ ԻՒՐ ԳՈՐԾԸ

—

Ինչպէս յայտնի է, Վենետկի Մխիթարեան միաբանութիւնը սեպտեմբերի 8 ին (օգոստոսի 26-ին) տօնում է իւր հիմնադրութեան 200-ամեակը։ Այդ առթիւ առաջ ենք բերում յիշեալ միաբանութեան հիմնադիր Մխիթար աբբահօր կենսագրութիւնը և կատարած գործը, տեղեկութիւնները քաղելով Ա. Երիցեանի «Վենետիկի Մխիթարեանք» գրքից և «Բիւզանդիոն» լրագրի մէջ տպուած Խաչկոնցի մի ընդարձակ յօդուածից։

—

I.

Մխիթար աբբան ծնուեց 1676 թ. փետր. 7-ին Փոքր Ասիայի Սեբաստիա քաղաքում։ Նորածնին մկրտեցին ազգային եկեղեցու ծիսակատարութեամբ և անուանեցին Մանուկ։ Երեխայի հօր անունը Պետրոս էր, իսկ մօրը՝ Շահրիստան։ Մանուկ երբ հինգ տարեկան եղաւ, նրան յանձնեցին մի քահանայի, որ կարդալ-գրել սովորեցնի երեխային։ Վերջինս մեծ աջողութիւն էր ցոյց տալիս ուսման մէջ և միշտ եկեղեցի էր յաճախում, այնպէս որ քիչ ժամանակից տիրացու դարձաւ։ Այս միջոցներին Մանուկի գլխում յղանում է ճգնաւոր դառնալու միտքը, և նա, ցանկանալով նմանուել Յովհաննէս-Մկրտչին, իւր հասակակից մի ընկերոջ հետ գնում է քաղաքից օշ-հեռու գտնուած մի այր, ուր սկսում են նրանք աղօթել, սպասելով որ հրեշտակն ուսելիք բերի իրենց։ Օրը մթնում է և յոյսներն ի դերև է ելնում, ուստի սկսում են լաց լինել, որի վրայ նրանց գտնում են ու տուն դարձնում։

Մանուկն ինն տարեկան էր, երբ դըպիր ձեռնադրուեց։ Տասը տարեկան հասակում երեխան փոխում է իւր ուսումնարանը՝—ծնողները քահանայի մօտից փոխադրում են նրան իրենց հարեան երկու քոյրերի՝ Մանասէ (?) և Մարիամ կոյսերի՝ մօտ, որոնք քաղաքացիներից ճանաչուած են եղել որպէս սրբուհիներ։ Կոյսերը մի օր յայտնում են Մանուկին, թէ նրա մասին երազ են տեսել, որ նա պիտի վարդապետանայ։ Այս պատմութիւնն էլ առանց ապաւորութեան չանցաւ, և Մանուկ սկսեց ճգնաւորական խստակեաց պայմաններում ապրել։ Նա մի քանի անգամ ցանկացաւ վանք մտնել, բայց հօրեղբայրներն ընդդիմացան, առարկելով որ դեռ փոքր է։

Տասն և հինգ տարեկան հասակում Մանուկ մտաւ Սեբաստիայի մօտակայ ս. Նշանի վանքը, ուր և սարկաւագութեան աստիճան ստացաւ շուտով և փոխեց իւր անունը Մխիթար։ Այնուհետև նոյընծան, ինչպէս վկայում են նրա պատմագրները, պարապեց ս. գրքերի ընթերցանութեամբ, բայց միշտ զգում էր, որ իրեն պակասում է մի հմուտ ուսուցիչ։

Այդ մրջոյներին ս. Էջմիածնի կողմից իբրև նուիրակ այդ կողմերն այցելեց ոմն Միքայէլ աբբեպիսկոպոս, որ գրանակաւոր անուն ունէր։ Մխիթար նրա մօտ 12 տարի ժամանակով աշակերտ մտաւ։ Եպիսկոպոսը Սեբաստիայում մնաց երկու ամսի չափ, սկսեց Մխիթարին ուսուցանել և յետոյ իւր հետ եւդոկիա տարաւ նրան, որտեղից անցան Կարին։ Առ հասարակ նկատելի էր, որ քանի հեռանում էին Սեբաստիայից, այնքան աւելի վատ էր վարւում եպիսկոպոսը Մխիթարի հետ։ Էջմիածին հասնելով, վանական այն ժամանակի խրատմամբեր կեանքին չկարողացաւ դիմանալ Մխիթար և 16 տարեկան հասակում նրա աչքերը հիւանդացան։ Չնայելով աչքացաւին, Մխիթար ստիպուած էր յաճախ գնալ վանքի այգին արևի կիզիչ ճառագայթների տակ մշակութիւն անելու։ Կեանքի այս ծանր պայմաններից ստիպուած, Մխիթար մտադրեց փախչել ս. Էջմիածնից և գնալ Սևանի անապատը, ուր նոյնպէս չկարողացաւ մնալ և վերադարձաւ Երևան՝ Կարին ուղևորուելու մտքով։ Ճանապարհին հասնելով Բասէնի ս. Աստուածածնի վանքը, Մխիթար մնաց այդ վանքում որպէս ուսուցիչ և պաշտօնավարեց մօտ մէկ ու կէս տարի։

1693-ին Մխիթար ցանկանում է վերադառնալ հայրենիք։ Բասէնից Կարին հասնելով՝ նա իմանում է մէկի մօտ, որ Հռոմում գտնուած էր։ Վերջինս պատմում է Հռոմի շքեղութեանց մասին և տալիս է Մխիթարին կարդալու Կղեմէս Կալանոսի մի գրութիւնը հայ և հռոմէական եկեղեցիների միաբանութեան մասին։ Մխիթար չլանում է իւր հիւրընկալի պատմածներից և վերադառնալով հայրենիք մտնում է ս. Նշանի վանքը, ուր 18 տարեկան հասակում «Աղաչեմք զքեզ, Աստուածածին» տաղն է յօրինում, որ մի ժամանակ երգուեց եկեղեցիներում։ Նոյն թուի վերջերին Մխիթար նոյից աչքացաւով բռնուեց և նրա աչքերը կուրացան։ Այդ միջոցներին նա յօրինում է դարձեալ մի քանի տաղ։ Վեց ամսի չափ կոյր մնալուց յետոյ, Մխիթար դարձեալ բժշկուեց և յաջորդ տարին Յովհան անուն մի երիտասարդ վարդապետի հետ ուղևորուեց դէպի Երուսաղէմ։ Բերիա հասնելով, նա ծանօթացաւ այնտեղ գտնուող յիսուսեանների հետ և յայտնեց, որ շատ ցանկանում է Հռոմ գնալ ուսանելու նպատակով։ Նրան համոզեցին, որ աւելի լաւ է, եթէ նա իւր այդ ձգտումներով Փոքր-Ասիայում սկսի գործել, բայց Մխիթար իւր ասածը պնդեց, ուստի նրան մի յանձնարարագիր տուին Ցիշեալ Յովնան վարդապետի հետ Մխիթար ուղևորուեց Ալէքսանդրէտ և այնտեղից էլ Կիպրոս, միշտ մօտենալով Հռոմին։ Բայց Կիպրոսում նա սաստիկ ջերմով բռնուեց և ստիպուած եղաւ վերադառնալ հայրենիք 1695 թ.։

Նոյն թուին նա նոյից մտաւ ս. Նշանի վանքը, ուր աշխատում էր Սողոմոնի առակները ոտանաւորի վերածելով։ Իսկ յաջորդ տարին, ոմն Կարապետ եպ.-ի ձեռքով, նա աբեղայ ձեռնադրուեց և յետոյ աշխատեց աշակերտներ հաւաքելու գործը գլուխ բերել։

1697 թ. Մխիթար գնաց Կ. Պոլիս և առաջարկեց Հռոմի Պրոպագանդայի աշակերտ ոմն Կարնեցի Խաչատուր վարդապետի—որ այդ ժամանակ գիտնականի մեծ համբաւ ունէր—մի միաբանութիւն կազմել, որի նպատակը լինէր քաջուս քարոզիչներ հասցնել՝ ի լուսաւորութիւն հայ ազգի։ Խաչատուր վարդապետ հրաժարւում է այս առաջարկից, առարկելով որ այդպիսի գործի համար մեծ գումար է հարկաւոր։ Տեսնելով որ Կ. Պոլսում էլ ոչինչ չկարողացաւ շինել, Մխիթար, հինգ ամսի չափ մնալով այդ քաղաքում, վճռեց վերադառնալ Հայաստան և Վրաստանի սահմանակից Օլթու գաւառում ձեռնարկել աշակերտներ հաւաքելու գործին։ Բայց նրան չաջողուեց իրագործել իւր այդ մտադրութիւնն էլ և նոյն թուի վերջին իւր միերկու աշակերտներով նա փոխեց իւր ճանապարհն ու նպատակը և 1698 թ. գնաց Մարդուան, յետոյ Ամասիա, ապա Եւդոկիա ու վերջապէս Կարին, ուր քաղաքից քիչ հեռու գտնուող Կարմիր վանքում դասաւանութեան պաշտօն ստանձնեց և յաջորդ տարին վարդապետական գաւազան ստացաւ նոյն վանքի առաջնորդից։

Մխիթար 25 տարեկան էր, երբ կրկին Կ. Պոլիս եկաւ, իւր նախկին դիտաւորութիւնը, այսինքն ազգին լաւ քարոզիչներ տալու նպատակ ունեցող մի միաբանութիւն կազմելու միտքն իրագործելու համար։ Այդ միջոցին նա ունէր չորս աշակերտ։ Նոյն ժամանակները Կ. Պոլսում մեծ շփոթ էր տիրում, որով հեան լուսաւորչականների և հռոմէականների յարաբերութիւնները շատ սուր կերպարանք էին ստացել։ Մխիթար, առանց ուշը դարձնելու այդ խառն դրութեան, տպել տուեց լատիներէնից թարգմանուած «Թովմայ Դեմբացին» անուն գիրքը, որ անցեալում արդէն երկու անգամ տպուած էր և մեծ յուզում էր առաջացրել։ Դրանից յետոյ դարձեալ ձեռնարկեց ուրիշ երեք կտոր գրքերի տպագրութեան։ Այս չորս գիրքը տպուեցին 1700 և 1701 թ. թ. և առիթ տուին հայ կղերին՝ կասկածելու Մխիթարի վերաբերմամբ։ Այդ կասկածը, աւելի հիմնաւոր պատճառներով, ևս առաւել սուր կերպարանք առաւ, և Կ. Պոլսի հայ կղերն սկսեց բացարձակապէս հալածել նրան։ Այդ հալածանքից ազատ մնալու համար, Մխիթար դիմեց կաթոլիկ հոգևորականութեան պաշտպանութեանը, բայց յետոյ շուտով զգաց, որ այդ պաշտպանութիւնն էլ այնքան հաստատուն չէ իւր ապահովութեան համար, ուստի իւր աշակերտների հետ, որոնց թիւն արդէն 16-ի էր հասել, գաղտագողի կերպով փախուստ տուեց Կ. Պոլսից՝ Զմիւռնիայի վրայով Մոռա ուղևորելու համար, ուր, նախապէս իւր աշակերտների հետ կայացրած ժողովի վճռով, միաբանութիւն պիտի հաստատէր։ Բայց հազիւ թէ Զմիւռնիա էր հասել, և ահա իւր ձերբակալման սուլթանական հրամանը հրատարակուեց այդ քաղաքում։ Մխիթար այդ լսելով անմիջապէս փոխադրուեց մի այլ նաւ, որ առանց Մոռա հանդիպելու ուղղակի գնում էր Վենետիկ։ Ճանապարհին շոգենաւ ալեկոծութեան հանդիպեց, և Մխիթար ստիպուած ավ եաւ Զանթէ կղզում ու միայն 1703 թ. փետրուարին հասաւ Մոռա, ուր մի տուն վարձեց և իւր միաբաններով բնակուեց այնտեղ։

(Կը շարունակուի)

Աշք

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՁՈՒՉԻ, 10 օգոստոսի.—Յայտնի է, որ անցեալ տարուայ վերջերը տեղս հասաւ Ճէքերջեան ազգանունով մի պարոն, որ Նիւ-Եորքում աւարտել է մագնիսական և հիպնոսական բժշկական մասնաճիւղը։ Պարոնը բժշկում էր առանց դեղերի և այն էլ տեղիս բժշկների կողմից անբուժելի համարուած հիւանդութիւններ։ Պարոնի երևումն զգալի վնաս ըսկսեց հասցնել մեր բժշկներից մի քանիսին և դեղագործներին, ուստի սրանց չրջանում իրարանցում ընկաւ, և դիմեցին ուր հարկն է նորեկ բժշկին հեռացնելու նպատակով։ Բժիշկների և դեղագործների դիմումն անաջողութեան մատնելու դիտաւորութեամբ, հիւանդատէրերը բազմաստորագիր խնդրագրով դիմեցին նահանգապետին և խնդրեցին թոյլատրել նորեկ բժշկին այստեղ մնալու. հիւանդատէրերը մասնացոյց էին լինում այն հանգամանքի վրայ, որ իրենց հիւանդները նոյն իսկ մի քանի օրուայ ընթացքում նկատելի կերպով լաւացման նշաններ են ցոյց տալիս։ Այս միջոցներին քաղաքային բժիշկն առանձին զեկուցագրով առաջարկեց մեր գաւառապետին ոչ միայն արգելելու Ճէքերջեանի գործունէութիւնը, այլ Կովկասից հեռացնելու նրան։ Գաւառապետը, հիմնուելով քաղաքային բժշկի զեկուցման վրայ, հրամայեց պ. Ճէքերջեանին երեք օրուայ ընթացքում ընդմիշտ հեռանալ քաղաքից։ Գաւառապետը սոյն կարգադրութեան երկրորդ օրը նահանգապետից մի հեռագիր ստացաւ, որով ստիպուեց սպասել մինչև նահանգապետի Ղուշի գալը։ Նահանգապետը գալով երկու կողմից էլ անձամբ բացատրութիւն պա-

---

զուի եզ. ուղղականի վրայ (ձուկ, եղէգ, լեռ), (նոյնը և արդի հայերէնում), այլ այդ բառերի հին, գրաբարեան եզ. ուղղ. վրայ և այսպէս ստացուել են սկզբնապէս լեառն-եր, ձուկն-եր, եղէգն-եր, և ապա լեռներ (եռն շեշտը կորցնելով սղւում և դառնում է ե. օր. սենեակ, սեռ. սենեկի. մատեան, սեռ. մատենի. Մամիկոնեան, սեռ. Մամիկոնենի և այլն)։ Սկզբ. ձուկն-երը դարձել է ձկներ (ու շեշտը կորցնելով սղւում է և դառնում ը, որը սակայն չէ գրւում. օր. կերակուր, սեռ. կերակրոյ—կերակրոյ. անասուն, սեռ. անասնոյ - անասնոյ. տուն, սեռ. տանն—տան և այլն)։ Սկզբնական եղէգն-եր դարձել է եղեգն-եր, (է շեշտը կորցնելով սղւում դառնում է մեծ մասով ի, սակայն անդամ ե. օր. սէր, սեռ. սիրոյ. տէր, սեռ. տիրոջ. Մովսէս, սեռ. Մովսիսի. եղէգն, սեռ. եղեգնի. և այլն)։

Թէ իսկապէս կիլիկեան հայերէնում յոգն. վերջաւորութիւնը տրւում է անմիջապէս եզակի ուղղականի վրայ, ցոյց են տալիս -եր յոգն. ունեցող այն բազմաթիւ օրինակները, որոնք առաջ են բերուած «Քերականութեան» մէջ (էջ 169—176), օր. ազգ-եր, աչ-եր, կոթ-եր, հայ-եր, հող եր, ձագ-եր, նիւթ եր, որբ-եր, փոս-եր և այլն։ Դրանց թուում պէտք է հաշուել, մեր կարծիքով, նաև սկզբնապէս եզ. ուղղ. ն ունեցող անունները (ձուկն, լեառն, և այլն)։

2) Նի. Յոգնակի ուղղակ. այսպէս են վերջանում երկվանկանի բառերը, բացի ի վերջացածներից (օր որ-դի)։ Օր. պատճառ-նի (եզ. ուղ. պատճառ) վիճակ նի (վիճակ), խելաք-նի (խելաք), պատրոյգ-նի (պատրոյգ), նաւտր-նի (նաւտար) և այլն։ Կիլիկեան նի յոգն. մասնիկը գտնում ենք դեռ դասական մատենագրութեան մէջ՝ -անի ձևով. օր. ազատ-անի, աւագ-անի, նամակ-անի, կրականի, վնաս-անի, իբրեց-անի և այլն։ Այս ձևերն աւելի գործածական են Փաւստոսի և Ղ. Փարպեցու մէջ։ Յետ. գրաբարեան շրջանում էլ, երբ անի ն խօսակցական լեզուի մէջ վաղուց արդէն նի էր դարձել, իբրև հնաբանութիւն գործածական ենք գտնում նաև -անի. օր. աստեղ-անի, գտակ-անի, զանգակ-անի և այլն։ Գր. Մագիստրոսի, Մխ. Սեբաստացու, Ն. Շնորհալու, Ն. Լամբրոնացու և ընդհանրապէս ոչ-կիլիկեցի մատենագիրներին է յատուկ յոգն. այս ձևը։ Դասական մատենագրութեան մէջ -անի մասնիկը գործածական է ոչ մաքուր գրաբար գրող մատենագիրների լեզուի մէջ, ուստի պէտք է ենթադրել, որ մի հին բարբառի ազդեցութեան տակ է առաջ եկել այն, որն և կիլիկեան հայերէնում լեզուական կանոն դարձել, ճիշտ այնպէս, ինչպէս -եր յոգն. վերջաւորութիւնը։

(Կը շարունակուի)

Աբ. Աբեղեան

Մարբուրգ (Գերմանիա)

հանջեց և տեղականալով գործին վերադարձաւ Գանձակ ու խնդիրն առաջադրեց նահանգական բժշկական վարչութեան: Վերջինս Ճէքէրջեանին թոյլատրեց միայն մագնետիզմով բժշկութիւններ կատարել, իսկ հիպնոտիզմով բժշկելիս պէտք է տեղական երկու բժիշկներ ներկայ լինեն: Սոյն կրատւնքից յետոյ Ճէքէրջեան մասնաւոր ընդունարան բաց արաւ և սկսեց հիւանդներ ընդունել: Այս հանգամանքը, յայտնի է, տեղացի բժշկներին հաճելի չէր, ուստի յարմար առիթը բաց չպիտի թողնէին ձեռքից՝ նորեկ բժշկին տեղից հեռացնելու կամ գէթ ձեռնաթափ անելու իր գործողութիւնների մէջ: Եւ ահա Ալէքսանդրապոլից 15 տարուայ համր ու խուլ մի աղջիկ են բերում, որի ականջներին քանիցս նայելուց յետոյ՝ Ճէքէրջեան ասում է, թէ նախապէս խօսք չի կարող տալ իր կատարելիք գործողութիւնների յաջողութեան պակասելուն, որովհետև հիւանդութիւնը հնացած է: Բժիշկն այնուամենայնիւ յայտնում է, թէ մինչև վեց ամիս իր գործողութիւնը կը կատարէ հիւանդի վրայ, և եթէ այդ ժամանակամիջոցում որևէ փոփոխութիւն նկատուի դէպի լաւը, այդ դէպքում կարելի է յուսալ, թէ հիւանդը կբժշկուի: Այն անձը, որի տանը մնում էր յիշեալ հիւանդը և որը լաւ չէր տրամադրուած դէպի Ճէքէրջեան, —գանգատւում է քաղ. բժշկին, որ իբր թէ Ճէքէրջեանի գործողութիւններն աւելի ևս վնասել են հիւանդին: Քաղ. բժիշկը, հիմնուելով յիշեալ անձի ասածի վրայ, արձանագրութիւն է կազմում և միևնոյն ժամանակ գանգատներ է գրում բժշկական վարչութեանը, ներկայացնելով Ճէքէրջեանին որպէս անգէտ հիպնոտիզմից ու մագնետիզմից: Նահանգական վարչութիւնը, հիմնուելով քաղ. բժշկի զեկուցման վրայ, դարձեալ որոշում է խլուել արգելել Ճէքէրջեանին բժշկութիւններ անելու, և օգոստոսի 5-ին պաշտօնապէս ստորագրութիւն է առնում նրանից, որ եթէ որևէ հիւանդի նայէ, պէտք է Կովկասի սահմաններից հեռացնուի: Այս վերջին հանգամանքը դժգոհութիւն ների տեղիք է տուել. պատուաւոր քաղաքացիներից բազմաստորագիր խնդիրքներ են ուղարկւում նահանգապետին, հիւանդատէրերից ոմանք շտապում են անձամբ Գանձակ գնալ գործը պարզելու: Նոյնպէս և Ճէքէրջեանն առանձին խնդրագրով դիմել է և խնդրել, որ առանձին մի յանձնաժողով նշանակուի և քննի իր գործունէութիւնը: Դիմումներ են եղել և աւելի բարձր իշխանութեանց—Թիֆլիս և Պետերբուրգ: Երկու կողմն էլ անհամբեր սպասում են, թէ ինչո՞վ կվերջանայ այս գործը: Հետևանքի մասին կհաղորդուի «Նոր-Դար» ին:

Դիտող

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(«Նոր-Դար»-ի Թղթակցութիւն)

—

ՄԱՐԱՂԱ, 3 օգոստոսի. — Մարաղացիք, ինչպէս և Պարսկաստանի բոլոր բնակիչները, շատ ընդունակ են «բերան չափելու» մէջ: Երբ մի դատաւոր առաջին անգամ քաղաք է մտնում, տիրում է ընդհանուր կարգապահութիւն, մինչև որ կարողանում են նորեկի բնաւորութեան և ոյժի հետ ծանօթանալ, այնուհետև ամեն բան իր սովորական ընթացքի մէջ է մտնում:

Մահմուդ խանի գործը, որի մասին ժամանակին գրել եմ խմբագրութեանդ, արդէն մեծ ապացոյց էր ներկայ դատաւորի կառավարչական անընդունակութեան: Նա անկարող եղաւ պատժել այդպիսի մի մեծ յանցանք և հէնց այդ օրից նրա վարկն ընկաւ: Զանցաւ քիչ ժամանակ, որ ճանապարհներից մի շարք կողոպուտների լուր հասաւ: Հետզհետէ այդպիսի դէպքերը կրկնուեցին քաղաքի մօտակայքում և վերջապէս քաղաքում:

Տեսնելով որ յանցանքն անպատիժ է մնում, յանցաւորներն աւելի խրախուսուեցին և դրանով պատճառ դարձան նորանոր յանցաւորների երևան գալուն: Գողութիւններն աւելի շատացան և ապա սկսուեց սպանութիւնների շարքը: Առաջին սպանութիւնից յետոյ տեղի ունեցաւ մի ընդհարում, որի ընթացքում ոճրագործութեան փափագողներն սպասում էին, թէ ինչ վերջ պիտի ունենայ մարդասպանի դատը և երբ տեսան, որ դա էլ անուշադրութեան մատնուեց, բոլոր «լոթի»ներն ասպարէզ մտան և այժմ իւրաքանչիւր գիշեր մի քանի գողութիւններ և իւրաքանչիւր շաբաթ մի երկու մարդասպանութիւն է տեղի ունենում:

Բացի սովորական պատճառներից գողութիւններն ու մարդասպանութիւնները քաղաքումս ունեն և մի քանի ուրիշ շարժառիթներ, որոնց երկուսի համար աւելորդ չեմ համարում մի փոքրիկ տեղեկութիւն տալ:

Մարաղայի բազմաթիւ այգիները, մրգաստանները, ծառաստանները, արտերն ու բանջարանոցները ոռոգւում են գլխաւորապէս Սօֆի գետից: Այդ գետի ջուրըն ամառուայ երեք ամիսների ընթացքում «իջարայ»-ով (պօդրաթ) է տրւում մի որևէ պաշտօնեայի, որ ջուրը ծախում է կալուածատէրերին: Անցեալներում ջուրը շատ առատ էր լինում, որովհետև մշակուած կալուածները քիչ էին. բայց վերջին տարիները, երբ նորանոր ամայի տեղեր մշակուեցին, ջրի պակասութիւն զգացուեց:

Ինչպէս վերջին տարիների սովը,նոյնպէս և Մարաղայում ջրի պակասութիւնն արհեստական էր: Ժամանակակից դատաւորը կալուածատէրերից աւելի խոշոր գումարներ կորզելու համար՝ այդ միջոցին էր դիմել և յաջողել էր, որովհետև նախկին ջրելու վարձը, որ ամենաչնչին մի գումար էր, վերջին տարիներս հասաւ խալւարին $37\frac{1}{2}$ դանի տարեկան (10,000 քառակուսի արշինին 7 րուբլի): Այդ արժէքն իբրև մշտական տուրք հաստատուեց կառավարութեան կողմից: Հայաբաւոր կալուածատէրեր տուեցին մէկի գրպանը լցնելու համար:

Ներկայ դատաւորը դրանով էլ չբաւականացաւ: Նա հաւաքել տուեց ջրի հարկը և երբ կալուածատէրերը եկան ջուր խնդրելու, «իջարադար»-ը (պօդրաթչիկ) սովորականի պէս նրանց տուեց ստացականներ, որոնցով «միրաբ»-ներից (ջրի վերահսկող պահապաններ, որոնք ջուրը են բաժանում կալուածատէրերին) պիտի ջուր ստանային: Բայց որչափ եղաւ նրանց զարմանքը, երբ «միրաբ»-ներն այդ ստացականներին նշանակութիւն չտուին:

Կատաղած կալուածատէրերը խմբով գնացին լցուեցին և ջուր պահանջեցին: Դատաւորը, երկիւղ կրելով ամբոխի կայրոյթից, իր մօտ կանչեց իջարադարին և հրապարակով հանդիմանեց ու հայհոյեց նրան: Դատաւորի այդ վարմունքից գոհ, կալուածատէրերը ցրուեցին. բայց ջրի սովը չվերանակուեց:

Ձատ ուշ միայն հասկացան խեղճ կալուածատէրերը, որ թէ դատաւորը և թէ «փարրաշ-բաշին» (ոստիկանապետ) գաղտնի ընկերակցութիւն ունին «իջարադար»-ի հետ և թէ նրանք մտադիր են սովորական եկամտից մի քանի անգամ աւելին ստանալ: Եւ դատաւորի գօշակի տակը լցուեց փայլուն դռաններով...

Եղան այնպիսի միամիտ կալուածատէրեր, որ հեռագրով բողոքեցին Թաւրիզ—նահանգապետին. բայց այդ բողոքն անօգուտ եղաւ: Չէ որ տեղիս դատաւորի հայրը նահանգապետի սիրելին է... Դիմեցին հոգևորականներին, դարձեալ անօգուտ: Չէ որ դատաւորը հրամայել է նրանց կալուածները ձրիաբար ջրել... Լցուեցին մէջլիդները և խմանեցին արդարադատութիւն խնդրեցին. բայց նրանք էլ լռեցին էին...

Մինչ այդ խոհեմ ու փորձառու կալուածատէրերը սովորական տուրքից չորս, հինգ, վեց անգամ աւելի վճարելով՝ ոռոգեցին կալուածները. իսկ այն միամիտները, որոնք դեռ ևս հաւատում են արդարադատութեան գոյութեանը, հաբիւրներով լցնելով «մէջլիդ»ները դըրդեցնում են քաղաքն իրենց «եա հիւսէն» աղաղակներով և խանգարում են խեղճ բնակիչների քունը:

Ներկայ ոճրագործութիւնների գլխաւոր պատճառներից մէկն էլ այն է, որ քաղաքիս նախկին դատաւորը, որ տեղացի է և մեծ յարգանք ու ժողովրդականութիւն է վայելում այստեղ, ցանկանում է իրենից յետոյ Մարաղայում եղող դատաւորների վարկը կոտրել՝ իր վարկն ու փառքը կանգուն պահելու համար: Թէև նա այժմ Խոյի դատաւոր է, մի պաշտօն՝ որ քաղաքիս դատաւորութիւնից բարձր է, այնուամենայնիւ նա ցանկանում է դարձեալ իր նախկին պաշտօնը ձեռք ձգել, որովհետև ծանօթ լինելով տեղական հանգամանքներին՝ այստեղ նա աւելի մեծ եկամուտներ կունենայ, աւելի փառաւոր կեանք կվարէ և կարող է մօտից հսկել իր կալուածներին, որոնք գտնւում են Մարաղայի շրջակայքում:

Իր այդ նպատակին հասնելու համար նա կողմնակի կերպով թելադրում է իր հրամանատարութեան տակ գտնուող զինուորներին, որոնք ապրում են Մարաղայում, անկարգութիւններ անել: Դատաւորի «բերանը չափելուց» յետոյ, նրանք սկսում են իրենց անկարգութիւնները և երբ ձերբակալուելով բանտարկւում են, իրենց հրամանատարի ջերմ պաշտպանութեան շնորհիւ շուտով ազատւում են առանց ամենաթեթև պատիժ անգամ կրելու: Ահա թէ որպիսի օրէնքներով է կառավարւում Պարսկաստանը...

Մինչդեռ քաղաքում ընդհանուր անկարգութիւն է տիրում, մինչդեռ մայրերը ողբում են իրենց զաւակների կորուստը, կալուածատէրերն անիծում են անգութ դատաւորին, ոճրագործները ծիծաղում են նրա թուլութեան վրայ, Թաւրիզից «խալաթ» է գալիս «Աղայը իջլալ էլ-մուլքին» (դատաւորին) Աւելի խիստ ապտակ կարելի՞ է տալ արդարադատութեան...

Durd

ՔԱՂԱՔԱԿԱՆ

—

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիան ցնծութեան մէջ է Թագաւոր Կայսրի առաջիկայ այցելութեան պատճառով: Հասարակապետութեան նախագահ Լուբէն շնորհաւորական հեռագրեր է ստանում Ֆրանսիայի ամեն ծայրից, քաղաքային խորհուրդներից, զանազան կորպորացիաներից և հասարակութիւններից: Դիւնկիրխենում և Ռէյմսում եռանդուն պատրաստութիւններ են տեսնում Կայսերական Զոյգի ընդունելութեան համար: Դիւնկիրխենի քաղաքային խորհուրդն օգոստոսի 11-ի արտակարգ նիստում որոշեց 50,000 ֆրանկ յատկացնել հասարակապետութեան նախագահի և ռուս Օգոստափառ Հիւրերի հանդիսաւոր ընդունելութեան համար: Նոյն նիստում քաղաքապետն առաջարկեց հետևեալ ուղերձը, որն ընդունուեց միաձայն և ուղարկուեց հասարակապետութեան նախագահին. «Պարոն Նախագահ: Դիւնկիրխենի քաղաքային խորհուրդը, արտակարգ նիստի գումարուելով, խնդրում է ձեզ ընդունէք իր խորին շնորհակալութիւնը մեզ ուղարկուած ուրախալի աւետիքի համար: Մեր բնակչութիւնն իրաւամբ պարծենում է իր հայրենասիրութեամբ, և, վստահ եղէք, կարող է արժանավայել կերպով դիմաւորել հասարակապետութեան նախագահին և իր դաշնակից Պետին: Դիւնկիրխենի քաղաքն և իր նաւահանգիստը պարծենում են նրանով, որ իրենց վիճակուած է մասնակից լինել ֆրանս-ռուսական միութեան հսկայական գործին»: Ընդարձակ պատրաստութիւններ են տեսնւում նաև Ռէյմս քաղաքում: Տեղական ազգային ճեմարանի նախագահը քաղաքապետին ուղղած մի նամակի մէջ յիշեցնում է, որ արդէն Պետրոս Մեծն այցելել է Ռէյմսը 1716թ.: «Մենք, Ռէյմսի բնակիչներս,—ասուած է նամակի մէջ,—յոյս ունինք, թէ մեր քաղաքին է վիճակուած իր պատերի մէջ ողջունել ռուսաց Կայսրին, որին ցնծութեամբ կընդունի ամբողջ Ֆրանսիան»:

-- Եւրոպական ամբողջ մամուլը յօդուածներ է նուիրում քաղաքական այն խոշոր անցքին, որպիսին հանդիսանում է Թագաւոր Կայսրի Ֆրանսիա այցելելը: Այդ յօդուածներից մեծ մասի հիմնական միտքն այն է, որ եթէ մի քանի տարի առաջ այդպիսի մի լուր կարող էր երկիւղ ազդել, այժմ քաղաքական սենսացիաների սիրահարները միայն կարող են վստահանալ ռուսաց Կայսրի Ֆրանսիա այցելելուն խաղաղութեան համար վտանգաւոր բնաւորութիւն վերագրել: Մատնանիշ են անում, որ Ֆրանսիայի և Գերմանիայի միջև եղած պառակտումը բաւականաչափ թուլացել է և տրամադրութիւն կայ հին հաշիւները մոռանալու. դրան ապացոյց կարող է լինել հէնց թէկուզ Չինաստանում գտնուած ֆրանսիական և գերմանական զօրքերի փոխադարձ յարաբերութիւնները և այն սիրալիր ընդունելութիւնը, որ ցոյց տուին ֆրանսիացիներն Ալժիրում գրաֆ Վալդերզէէին ֆելդմարշալի Չինաստանից վերադառնալիս: Երկու պետութիւնների միջև եղած յարաբերութիւնները շատ լաւ են, հետևաբար Գերմանիան և իր դաշնակից պետութիւնները հիմք չունին որևէ երկիւղ ունենալու ֆրանս-ռուսական բարեկամութիւնից, որի կապերն աւելի ևս պիտի ամրապնդուին Ցարի երկրորդ անգամ Ֆրանսիա այցելելուց:

—

ԱՆԳԼԻԱ

Պաշտօնապէս հրատարակուած է լորդ Կիտչեների մի զեկուցումը, որի մէջ հաղորդւում է, թէ պատերազմը Հարաւային Աֆրիկայում ինչ դրութեան մէջ էր մինչև յուլիսի 8 ը (ն. տ.): Լորդ Կիտչեները պատերազմող բուրերի թիւը որոշում է 13,500, վստահութիւն է յայտնում, որ նրանք կենսական մթերքներ շատ ունին,բայց չի հաստատում,թէ նրանց ունեցած ռազմամթերքը շատ լինի,հաւատացնում է,որ նրանց գործողութեան եղանակն անխոհեմ է,որովհետեւ նրանք կռւում են կատարեալ յուսահատութեամբ, չհասկանալով թէ ինչ դրութեան մէջ են գտնւում իրենց ընտանիքները: Լորդ Կիտչեները, վերջապէս, արդարացնում է իրեն, ասելով թէ հարաւ-աֆրիկեան երկու հասարակապետութիւնների նուաճման գործը դանդաղութեամբ է առաջ գնում նրա համար, որ իր տրամադրութեան տակ գրուած 16,000 եոմանրիները բաւականաչափ պատրաստութիւն չունին պատերազմելու: «Morning Leader»-ն այս զեկուցման առթիւ նկատում է, թէ անգլիական գլխաւոր հրամանատարին վայել բան չէ, որ նա անուանարկում է թշնամուն և անմտութիւն է անուանում մի դիմադրութիւն, որ ինքը չի կարողանում ընկճել: «Daily News»-ը, նոյն միտքը յայտնելով, նկատում է, թէ Կիտչեների զեկուցման մէջ միակ բանը, որ արժանի է ուշադրութեան, այդ այն է, որ նա խոստովանում է արդէն մի քանի ամիս Հարաւային Աֆրիկայում գտնուած 16,000 զինուորների կատարեալ անպէտքութիւնը:

— «Standard»-ին հեռագրում են Բրիւսէլից օգոստոսի 9-ից. «Կրիւգերին շրջապատող անձերը հաստատում են այն լուրը, որ Կիտչեների կոչի դէմ բողոքով մի յայտագիր է պատրաստւում: Ցայտագիրը կուղղուի Հաագի պայմանագիրը ստորագրող բոլոր պետութիւններին. Կրիւգերը նրանց ուշադրութիւնն է հրաւիրում այն բանի վրայ, որ անգլիական կառավարութեան գործողութիւնները Հարաւային Աֆրիկայում խանգարում են Հաագում ընդունուած սկզբունքները: Ցայտագիրն առանձնապէս շեշտում է պետութիւնների այն բարոյական պարտաւորութիւնը, որ ունեն նրանք պայմանագիրն անխախտ պահպանելու: Ցայտագրի մէջ Կրիւգերն ակնարկում է, որ եթէ պայմանագիրն ստորագրող պետութիւններն անտարբեր մնան և թոյլ տան, որ անգլիական կառավարութիւնը խախտի միջազգային իրաւունքը, ապա գեներալ Բոթան և բուրերի միւս հրամանատարներն իրենց իրաւունքը կըհամարեն վարուելու այնպէս, ինչպէս որ յարմար կըհամարեն իրենք»:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսից հեռագրում են օգոստոսի 18-ից. «Արտաքին գործերի մինիստրը ֆրանսիական դեսպանատան խորհրդականին յանձնեց Պարիզի Թուրք դեսպանատան ուղարկուած հեռագրերի պատճէնները, որոնցով ֆրանսիական կառավարութեանը խնդրում է վերանորոգել դիւանագիտական յարաբերութիւնները: Ընթացիկ խնդիրների գոհացուցիչ լուծումն ապահովուած է»:

—Կապշտադից հեռագրում են, որ Ձեպերսի և Բաօդերմերայի բուէր զօրախումբերը մտել են Կապի գաղութը Աուստհօրնի հարաւային կողմը: Օգոստոսի 14-ին Խուսեհօրնի արևմտեան կողմից խիստ հրացանաձգութեան ձայներ էին լսւում:

—Կիտչեները հաղորդում է Պետորիայից. «Գարրիտը զեկուցանում է, որ Լօսբերգի մօտ գերի է վերցրել Պիտտ Դիլարէյին, գեներալի եղբօրը, և մի քանի բուէրի:—Վիլեամսի զօրախումբը մի ամսուայ ընթացքում անցել է Կլերկսդորպից դէպի Թաունգս և այնտեղից յետ է դարձել Կլերկսդորպ: Անգլիացիները բուէրներից խլել են 25,200 ձի, 4,060 գլուխ տաւար, 184 սայլ, 100 ձի և ջորի և 47 հրացան: 4 բուէր սպանուած են, 8-ը վիրաւորուած և 16-ն անձնատուր են եղել: Մի քանի հազար չուալ հաց ոչնչացրած է:—Բատերվալի և Գամանզեկրաալի միջև հիւսիսային երկաթուղու գծի վրայ օգոստոսի 19-ին յօդս է ցնդեցրած մի գնացք: 250 հոգուց բաղկացած մի բուէր զօրախումբ իսկոյն սկսեց հրացան պարպել գնացքի վրայ և հրդեհեց այն: Փոխ-գնդապետ Վանդելեր սպանուած է. ուրիշ կորուստների մասին առայժմ ոչինչ հաղորդուած չէ:

—«Times»ին Ձանքհայից հաղորդում են, թէ այնտեղ տեղեկութիւններ են ստացած Չժու-Չժօուլում տեղի ունեցած կոտորածների հեղինակների պատիժների մասին: Օգոստոսի 12-ին պահապան եղող կապիտանը գլխատուած է: Նահանգապետը պատրաստ է խոստ պատժել նաև 24 յանցաւոր. սակայն չեն կարծում, որ մեծ պատիժներ տրուին, քան եթէ պաշտօնանկ անելը:

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

—

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(1901 թ. մայիսի 6-ից)

—

Ժամերը նշանակւում են Պետերբուրգի ժամանակը, փակագծերի մէջ—Թիֆլիսի ժամանակը:

—

Արագընթաց գնացքը № 2 Թիֆլիսից Բագու մեկնում է (շաբաթը մի անգամ, հինգշաբթի օրերը) 9 ժ. 17 ր. (10 ժ. 15 ր.) առ., հասնում է Բագու 10 ժ. 40 ր. (11 ժամ 38 ր.) եր.:

Արագընթաց գնացքը № 1 Բագուից Թիֆլիս մեկնում է հինգշաբթի օրերը 5 ժ. 20 ր. (6 ժ. 18 ր.) առ., Թիֆլիս հասնում է 7 ժ. 25 ր. (8 ժ. 23 ր.) եր.:

Արագընթաց գնացքը № 1 Թիֆլիսից Բաթում մեկնում է 9 ժ. 11 ր. (10 ժ. 9 ր.) առ., հասնում է Բաթում 7 ժ. 58 ր. (8 ժ. 56 ր.) եր.:

Արագընթաց գնացքը № 2 Բաթումից Թիֆլիս մեկնում է 9 ժ. 45 ր. (10 ժ. 43 ր.) եր., հասնում է Թիֆ-

լիս 7 ժ. 57 ր (8 ժ. 55 ր.) առ.։

Պոստային գնացքը № 3 Բագուից Թիֆլիս մեկնում է 10 ժ. 15 ր. (11 ժ. 13 ր.) եր., Թիֆլիս հասնում է 4 ժ. 13 ր. (5 ժ. 11 ր.) ցերեկուայ. Թիֆլիսից Բաթում մեկնում է 5 ժ. 27 ր. (6 ժ. 25 ր.) եր., Բաթում հասնում է 6 ժ. 30 ր. (7 ժ. 28 ր.) առ.։

Մարդատար գնացքը № 5 Բագուից Թիֆլիս մեկնում է 12 ժ. 27 ր. (1 ժ. 25 ր.) ցերեկուայ, Թիֆլիս հասնում է 5 ժ. 51 ր. (6 ժ. 49 ր.) առաւօտեան. Թիֆլիսից Բաթում մեկնում է 6 ժ. 49 ր. (7 ժ. 47 ր.) առ., Բաթում հասնում է 6 ժ. 48 ր. (7 ժ. 46 ր.) եր.։

Պոստային գնացքը № 4 Բաթումից Թիֆլիս մեկնում է 10 ժ. 17 ր. (11 ժ. 15 ր.) եր., Թիֆլիս է հասնում 10 ժ. 40 ր. (11 ժ. 38 ր.) առաւօտեան. Թիֆլիսից Բագու մեկնում է 11 ժ. 48 ր. (12 ժ. 46 ր.) ցերեկուայ, հասնում է Բագու 5 ժ. 40 ր. (6 ժ. 38 ր.) առ.։

Մարդատար գնացքը № 6 Բաթումից Թիֆլիս մեկնում է 8 ժ. 15 ր. (9 ժ. 13 ր.) առ., հասնում է Թիֆլիս 7 ժ. 38 ր. (8 ժ. 36 ր.) երեկոյեան. Թիֆլիսից Բագու մեկնում է 8 ժ. 18 ր. (9 ժ. 16 ր.) եր., Բագու հասնում է 12 ժ. 40 ր. (1 ժ. 38 ր.) ցերեկուայ։

Պոստային գնացքը Թիֆլիսից Կարս մեկնում է 10 ժ. (10 ժ. 58 ր.) եր., հասնում է Սանահին 2 ժ. 56 ր. (3 ժ. 54 ր.), Ղարաքիլիսա—5 ժ. 4 ր. (6 ժ. 2 ր.) առ., Ալէքսանդրապոլ—8 ժ. 37 ր. (9 ժ. 35 ր.) առ., Կարս—12 ժ. 23 ր. (1 ժ. 21 ր.) ցերեկուայ։

Պոստային գնացքը Կարսից Թիֆլիս մեկնում է 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.) ցերեկուայ, հասնում է Ալէքսանդրապոլ 7 ժ. 40 ր. (8 ժ. 38 ր.) եր., Ղարաքիլիսա—11 ժ. (11 ժ. 58 ր.) գիշերուայ, Սանահին—1 ժ. 15 ր. (2 ժ. 13 ր.) գիշ., Թիֆլիս—6 ժ. 15 ր. (7 ժ. 13 ր.) առ.։

Ապրանքատար-մարդատար գնացքը Թիֆլիսից Ղարաքիլիսա մեկնում է 8 ժ. 10 ր. (9 ժ. 8 ր.) առ., հասնում է Սանահին 3 ժ. 55 ր. (4 ժ. 53 ր.), Ղարաքիլիսա—7 ժ. 28 ր. (8 ժ. 26 ր.) եր.։

Ապրանքատար-մարդատար գնացքը Ղարաքիլիսայից Թիֆլիս մեկնում է 6 ժ. 8 ր. (7 ժ. 6 ր.) առ., հասնում է Սանահին 8 ժ. 57 ր. (9 ժ. 55 ր.) առ., Թիֆլիս—6 ժ. 05 ր. (7 ժ. 03 ր.) եր.։

Թիֆլիս Բորժոմ

Մարդատար գնացքը № 7 Թիֆլիսից Բորժոմ մեկնում է 1 ժ. 40 ր. (2 ժ. 38 ր.) ցերեկուայ, հասնում է Մցխէթ 2 ժ. 16 ր. (3 ժ. 14 ր.), Գորի—3 ժ. 37 ր. (4 ժ. 45 ր.), Միխայլովօ—4 ժ. 59 ր. (5 ժ. 57 ր.), Բորժոմ—6 ժ. 40 ր. (7 ժ. 38 ր.) եր.։

Մարդատար գնացքը № 8 Բորժոմից Թիֆլիս մեկնում է 1 ժ. 5 ր. (2 ժ. 3 ր.) գիշ., հասնում է Միխայլովօ 2 ժ. 15 ր. (3 ժ. 13 ր.), Գորի—4 ժ. 29 ր. (5 ժ. 27 ր.), Մցխէթ—6 ժ. 2 ր. (7 ժ.), Թիֆլիս—6 ժ. 45 ր. (7 ժ. 43 ր.) առ.։

Մցխէթ-Թիֆլիս

Ամառային գնացքը № 18 Մցխէթից Թիֆլիս մեկնում է 5 ժ. է. ր. (6 ժ. 20 ր.) եր., հասնում է Թիֆլիս 6 ժ. 01 ր. (6 ժ. 59 ր.) եր.։

Միխայլովօ-Թիֆլիս

Ամառային գնացքը № 20 Միխայլովոյից Թիֆլիս մեկնում է 6 ժ. 49 ր. (7 ժ. 47 ր.) եր., հասնում է Գորի 7 ժ. 55 ր. (8 ժ. 53 ր.), Մցխէթ—9 ժ. 31 ր. (10 ժ. 29 ր.), Թիֆլիս—10 ժ. 14 ր. (11 ժ. 12 ր.) եր.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(M) № 397 1—1

ТИПО-ЛИТОГРАФІЯ

„Пушкинская скоропечатня"

„Պուշկինեան արագատիպ„ տպարան

(Նոր բացուած հայոց տպարան)

Ընդունւում են ամեն տեսակ և ամեն լեզուներով պատուէրներ։ Ունինք և մեծ քանակութեամբ հայերէն նոր ձևի տառեր, որոնցով տպւում են շատ գրքեր և ի միջի այլոց բժ. Բուղուղեանի բրոշիւրները։ Տպագրութեան մաքրութեան վրայ առանձին ուշադրութիւն է դարձնւում։ Գները չափաւոր և մատչելի են։ Պատուէրներն ընդունւում են հետևեալ հասցէով С.-Петербургъ, Лештуковъ 4.

(705) Տպարանի կառավարիչ Ա. Գեղամեան 5—1

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Հրաւիրւում է Օդեսսայի հայոց եկեղեցական-ծխական երեք բաժանմունքով մի դասեայ դպրոցի համար, աւանդելու ռուսաց, հայոց լեզուները, նաև թուաբանութիւն ու վայելչագրութիւն։ Աւարտողները պէտք է պատրաստուած լինեն միջնակարգ պետական ուսումնարանները մտնելու։

Ցանկացողները պէտք է ներկայացնեն ուսուցչական ցէնզ, նաև վկայական վարչութիւնից իրենց գործունէութեան մասին այս ասպարիզում։

Վարձատրութիւն՝ 720 րուբլի տարեկան և մի սենեակ վառելիքով, կից ուսումնարանին։

Առաջարկութիւններն ուղղել հետևեալ հասցէով Одесса, Ктитору армянской церкви Сирагану Исааковичу Асвадурову.

(706) 3—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԵԱՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՑ

Ս. Պետերբուրգի եկեղեցեաց Խորհրդարանի հաստատուելու օրից սկսած (1883 թ.)՝ Խորհրդարանը միշտ իր գլխաւոր հոգսերից մէկն է համարել Պետերբուրգի բարձրագոյն դպրոցներում ուսանող հայ երիտասարդներին նիւթապէս նպաստելը։ Տարէ ցտարի Խորհրդարանին դիմող և օժանդակութիւն խնդրող ուսանողների թիւն ստուարանում է, սրածասանակ աճում է և այս գումարի քանակը, որ եկեղեցական Խորհրդարանը գործադրում է սոյն նպատակի համար։ Ներկայում այդ գումարը հասնում է 10 հազար րուբլու տարեկան։

Սակայն չնայելով որ նպաստից ընդհանուր գումարն այդքան նշանաւոր է, խնդրատուների բազմութեան պատճառով Խորհրդարանն ակամայից ստիպուած է աննշան նպաստներ տալ, այն է 15—25 րուբլի ամսական, որ ըստ մեծի մասին չէ կարող գոհացում տալ ապրուստի բնական կարեաց, մանաւանդ այն անձանց համար, որոնք օգնութեան ուրիշ աղբիւր չունին։

Նպաստներ տալուս՝ Խորհրդարանն աշխատում է ըստ կարելւոյն ստոյգ տեղեկութիւններ ժողովել խնդրատուների նիւթական կացութեան մասին կամ ընկերներից և կամ կողմնակի անձերից։ Սակայն այդ տաղտուկութիւնները շատ անգամ աւելի են տալիս դժգոհութեանց Խորհրդարանի անօրինութեան նկատմամբ, որք մեծ մասամբ այդ տեղեկութեանց հիման վրայ են կատարւում։

Փափագելով բարւոքել Խորհրդարանի այս գործունէութիւնը, որ թէ նշանակած նպաստները համապատասխանեն բարձրագոյն դպրոցներում ուսանող երիտասարդների բնական կարեաց և պիտոյից և թէ Խորհրդարանն արդարադատ լինի իր պարտաւորութեանց կատարման ժամանակ Խորհրդարանս որոշեց յայտարարել ի լուր ամենեցուն։

Այն անձինք, որք կամենում են եկեղեցական գումարից նպաստ ստանալ, պարտաւոր են նախօրօք խնդրագրով դիմել Խորհրդարանին, ուր յայտնելու են թէ ինչ դպրոցում են ուսանում, որ կուրսումն են, ումից և ինչ քանակութեամբ ապրուստի միջոց են ստանում, ունեցել են ամառային գործնական պարապմունք և որքան են ստանալիս եղել ամսական։ Միևնոյն ժամանակ պարտաւոր են ներկայացնել մի որևէ ուղղական ազգային հաստատութեան կամ հասարակութեան վստահութիւնը վայելող անձի վկայութիւնը, թէ իրաւ խնդրատուն չունենոր ծնողաց զուրկ է, ոչ մի տեղից նպաստ չէ կարող ստանալ, կամ եթէ ստանում է ինչ քանակութեամբ։

Այս տեղեկութիւնները Խորհրդարանիս համար լոկ բարոյական նշանակութիւն ունին և կարող են հրատարակուել՝ եթէ Խորհրդարանը պէտք համարէ։

Այն անձինք, որք նոր են մտել բարձրագոյն դպրոց, մինչև երկրորդ կուրս փոխուելը չեն կարող նպաստ ստանալ եկեղեցական գումարից։ Ստիպողական և անակնկալ դէպքերը միայն կարող են առիթ տալ բացառութեանց. Չեն ստանալ նպաստ նաև միջնակարգ դպրոցներում ուսանողները։

(702) 3—3

ՆՊԱՍՏՈՒՄ Է ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆԸ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑ

ԳՈՒՄՄԻ-ՊԵՊՍԻՆ

Pemmi Gupsin

ԴԵՂԱԳՈՐԾ Ի. ՊՕՂՈՍՍԿՈՒ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Համեղ կենդարար կոնֆետներ, մեքենաբար մաքրում են ատամները, հականեխում և հաճելի հոտ են տալիս բերանի խոռչին և լնդերքին։ Գումմի-Պեպսինը գործածելիս նուազում է ծխախոտ ծխելու ցանկութիւնը։ Իւրաքանչիւր չիրտ կոնֆետ պարունակում է ամենալաւ Պեպսին և «Գումմի», որը հաճելի է և անվերջ ծամւում է։

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.

Վաճառւում է դեղատներում և դեղատնային խանութներում

Պահեստը СПБ. Вас. Остр., 4 лин., д. 39.
Վաճառւում է՝ Южноусское О-во апт. т. և ուրիշների մօտ։ (M.)35710 16—16

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՒՈՒԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատտեստատներ։

Աւանդելի առարկաները սրանք են. 1) Առևտրական Տնտեսութիւնը 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ՝ կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն (վատ ձեռքի почеркъ ուղղելը)։ Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները, սեպտեմբերի 1 ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11 ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում Սոլոլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը, № 9, Լերմոնտովսկայա փողոցում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ **ՁՐԻԱՊԷՍ** Եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի

(650) տանը. въ Тифлисъ, С. П. Мануэльянцу. 25—11

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՄԲ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку Пречещная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատտեստատներ. Կուրսերում աւանդւում են՝ 1) առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրայ. 2) հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բանկային 3) առևտրական թղթակցութիւն. 4) առևտրական տնտեսագիտութիւն. 5) առևտրական մուրհակային օրէնքներ. 6) գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղացումն ձեռագրի)։

Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամենայն օր՝ կուրսերում և «Եղբ. Ծովիանեան և Ընկ.» Բագուայ բաժանմունքում։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ), մանրամասն ծրագիրը և տրւում են և ուղարկւում ձրի արար։ Օտարաքաղաքացիները դիմում են учредителю коммерческихъ курсовъ А. И. Тер-ъКаспарову, Баку.

(678) 25—8

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

За успѣшныя занятія благодарности

Препод. в. ведется по собств. сочиненіямъ

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ

преподаетъ

Полный курсъ БУХГАЛТЕРІИ

ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтера (двойная италіянска), 2) Коммерческая ариѳметика, 3) Коммерческая экономія, 4) Ариѳметика на счетахъ, 4) Торговыя и вексельныя узаконеня и э) Коммерческая корреспонденця.

Курсъ 3-хъ-мѣсячныи. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательсто и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.

Занятія съ 1-го числа

(480) Годъ занятій одинадцатый 100—64

ՊԱՐԻԶԻ ԴԵՂԱԳՈՐԾ ՄԻ

ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ

ԹՈՅԼ Է ՏՐՈՒԱԾ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ

Այս կապսիւլների մէջ պարունակուած զուտ սանտալի էսսենցիան բժիշկները խորհուրդ են տալիս գործածել հանրէքի (գաղտնի հիւանդութիւնների) դէմ կապոյ-բալզամի և կուբեբայի դէմ։ Սա ներգործում է աւելի արագ, չի յոգնեցնում ստամոքսը, ոչ մի հոտ չի պատճառում և ոչնչացնում է փսխումն ու կճռելը։ Կեղծիքներից խուսափելու համար պահանջեցէք, որ իւրաքանչիւր կապսիւլի վրայ լինի սև տառերով դրոշմուած ՄԻԴԻ։ Պահեստը Ռուսիայի գլխաւոր դեղատներում։

(M.) № 200369 60—34

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՅԻ

(INJECTION AU MATICO)



Գրիմո և ընկ. դեղագործների թոյլ է տրուած Ռուսիայում։ Հեղուկի մէջ չափագործուած են պերուանեան Մատիկօ բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ զարմանալի կերպով բժշկում է հանրէքից (սերմնաթափութիւն) և մի քանի տարուայ ընթացքում համաշխարհային հռչակ է ստացել։ Կարճ ժամանակում բուժում է ամենազօրեղ սերմաթափութիւնները։

Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։

(M) 200345 43—13

Доз. цензурою Тифлисъ, 1901 20 августа -го дня Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ № 387